# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N *«ԱՍՀՆ-ՄԱԳԱՇՁԲ-17/24-ԿՄ»*

ք. Երևան <<28>> ապրիլի 2017 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայաստանի կույրերի միավորման հրատարակչություն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Թ. Բոյաջյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կպտարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 10505938.26 (Տաս միլիոն հինգ հարյուր հինգ հազար ինը հարյուր երեսունութ դրամ քսանվեց լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2017թ.:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ |
| հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3 | հասցեն՝ ք. Երևան, Իսահակյան 18 |
| Բանկի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | Բանկի անվանումը՝ Էկոնոմբանկի Մյասնիկյանի մասնաճյուղ |
| հ/հ 900011016715 ՀՎՀՀ 01506515 | հ/հ 163038108482 ՀՎՀՀ 01501855 |
| Աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյան | Գլխավոր տնօրեն Թ. Բոյաջյան |
| ..... | ..... |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |

*Հավելված 1*
*<<28>> ապրիլի 2017թ. կնքված*
*N«ԱՍՀՆ-ՄԱԳԱՇՁԲ-17/24-ԿՄ» ծածկագրով գնման պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

## ՀՀ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 10 ԲԱԺՆԻ 01 ԽՄԲԻ 02 ԴԱՍԻ '01. ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՀԱՏՈՒԿ ՏԱՌԱՏԵՍԱԿՆԵՐՈՎ ԳՐՔԵՐԻ ԵՎ ԱՄՍԱԳՐԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ, ՏԵՏՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ «ԽՈՍՈՂ ԳՐՔԵՐԻ» ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

### 1. Բրայլյան տետր

| Ծառայության անվանումը | Բրայլյան տետրերի պատրաստում |
|---|---|
| 1. Տետրի չափսը | 20 սմ լայնություն/25 սմ երկարություն |
| 2. Թղթի տեսակը | 160-170 գ. խտ օֆսետ |
| 3.Տետրի կազմը | 1-ին էջին պետք է գրված լինի տետրի անվանումը՝ «Բրայլյան Տետր», 2-րդ էջին՝ թվատառանշանները բրայլյան համակարգով և նշված լինի արտադրողի և ֆինանսավորողի տվյալները |
| 3. Տետրերի պատրաստման ժամկետը | հայտը ներկայացնելուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում |
| 4. Ներկայացվող պահանջները | Պատրաստված տետրերի տրամադրումը ՀԿՄ մարմիններին և ներկայացուցիչներին |

### 2. Բրայլյան գիրք /հայերեն/

| Ծառայության անվանումը | Բրայլյան գիրք /հայերեն/ տպագրում |
|---|---|
| 1. Գրքի թերթի չափսը | 21 սմ լայնություն/30 սմ երկարություն |
| 2. Թերթի թղթի տեսակը | 160-170 գ. խտ օֆսետ |
| 3. Գրքերի տպագրման ժամկետը | հայտը ներկայացնելուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում |
| 4. Ներկայացվող պահանջները | 1. Տպագրված գրքերի տրամադրումը ՀԿՄ մարմիններին և ներկայացուցիչներին<br>2. Տպագրված գրքերի անվանացանկերը և դրանց վերաբերյալ այլ տեղեկատվություններ պատվիրատուից ստացված ձևաչափով տրամադրվում է պատվիրատուին:<br>3. Տպագրված գրքերի վրա պետք է նշված լինի, որ ծրագիրն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: |

### 3. ՀԿՄ ամենամսյա "Բյուլետեն" ամսագրեր /հայերեն/

| Ծառայության անվանումը | ՀԿՄ օրգան ամենամսյա "Բյուլետեն" /հայերեն/ տպագրում |
|---|---|

| | |
|---|---|
| 1. Ամսագրի թերթի չափսը | 21 սմ լայնություն /30 սմ երկարություն |
| 2. Թղթի տեսակը | 160-170 գ. խտ օֆսետ |
| 3. “Բյուլետեն” տպագրման ժամկետը | հայտը ներկայացնելուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում |
| 4. Ներկայացվող պահանջները | 1. Տպագրված ամսագրերի տրամադրումը ՀԿՄ մարմիններին և ներկայացուցիչներին:<br>2. Տպագրված ամսագրերի վրա պետք է նշված լինի, որ ծրագիրն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: |

**4. Խոսող գրքեր /հայերեն/**

| Ծառայության անվանումը | Խոսող գրքեր /հայերեն/ ձայնագրում |
|---|---|
| 1. Թվային սկավառակի տեսակը | DVD |
| 2. Գրքերի ձայնագրման ժամկետը | հայտը ներկայացնելուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում |
| 3. Ներկայացվող պահանջները | 1. Ձայնագրված խտասկավառակների տրամադրումը ՀԿՄ մարմիններին և ներկայացուցիչներին<br>2. Ձայնագրված գրքերի անվանացանկերը և դրանց վերաբերյալ այլ տեղեկատվություն, պատվիրատուից ստացված ձևաչափով, տրմադրվում է պատվիրատուին:<br>3. Ձայնագրված գրքերի վրա պետք է նշված լինի, որ ծրագիրն իրականացվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:<br>4.Կատարողի մեղքով վնասված ձայնագրությունների դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է այն փոխարինել կրկնօրինակներով: |

1.Ապրանքի առաքումը կատարվում է աշխատանքները կատարող կազմակերպության կողմից:

2..<<Խոսող գրքերի>> ձայնագրությունները և դրանց անվանացանկերը, ինչպես նաև Բրայլյան գրքերի անվանացանկերը պատվիրատուն կարող է տեղադրել պաշտոնական կայքէջերում և տրամադրել ռադիոընկերություններին: Շահագրգիռ այլ մարմինների նախաձեռնությամբ դրանք կարող են տեղադրվել նաև այլ կայքէջերում և տրամադրվել ռադիոընկերություններին միայն պատվիրատուի համաձայնությամբ:

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N | Ծառայության անվանումը | Չափի միավորը | Միավորի գինը (դրամ) | Մատուցվելիք Ծառայությունների քանակը 2017 թ. ընթացքում | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 1-ին եռ. | 2-րդ եռ. | 3-րդ եռ. | 4-րդ եռ. | Տարեկան քանակը | Ընդամենը Գումար (հազ. դրամ) |
| 1. | Բրայլյան տետր | հատ | 288.75 | 0 | 0 | 0 | 320 | 320 | 92.4 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2. | Բրայլյան գիրք | թերթ | 58.38 | 0 | 20000 | 11738 | 10589 | 42327 | 2471.050,26 |
| 3. | 'Բյուլետեն' ամսագիր | թերթ | 67.27 | 0 | 34000 | 20800 | 19600 | 74400 | 5004.888 |
| 4. | 'Խոսող գիրք' | Ժամ | 1836 | 0 | 690 | 500 | 410 | 1600 | 2937.6 |
| | Ընդամենը | | | | | | | | 10505.938,26 |

| Աշխատանքի կատարման ժամկետը | |
|---|---|
| սկիզբը | ավարտը |
| Պայմանագրի կնքման պահից | 20.12.2017թ. |

* Կատարողը աշխատանքի արդյունքը մատակարարում է Պատվիրատուի նշած հասցեներով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3
Բանկի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
հ/հ 900011016715 ՀՎՀՀ 01506515

Աշխատանքների ղեկավար Ա. Գրիգորյան

Տ.Տ. .....
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ

հասցեն՝ ք. Երևան, Իսահակյան 18
Բանկի անվանումը՝ Էկոնոմբանկի Մյասնիկյանի մասնաճյուղ
հ/հ 163038108482 ՀՎՀՀ 01501855

Գործադիր տնօրեն Թ. Բոյաջյան

.....
Տ.Տ. (ստորագրություն)

*Հավելված 2*
*<<28>> ապրիլի 2017թ. կնքված*
*N «ԱՍՀՆ-ՄԱԳԱՇՁԲ-17/24-ԿՄ» ծածկագրով գնման պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1-4 | Տպագրական աշխատանքներ | 0 | 0 | 0 | 0 | 3677200 | 4721620 | 5778500 | 6829100 | 7724100 | 8755300 | 9630800 | 10505938,26 | **10505938,26** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3
Բանկի անվանումը՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
հ/հ 900011015715 ՀՎՀՀ 01506515

Աշխատանքային ազգի ղեկավար Ա. Գրիգորյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

ՀԿՄ «Հրատարակչություն» ՍՊԸ

հասցեն՝ ք. Երևան, Իսահակյան 18
Բանկի անվանումը՝ Էկոնոմբանկի Մյասնիկյանի մասնաճյուղ
հ/հ 163038108482 ՀՎՀՀ 01501855

Տնօրեն Թ. Բոյաջյան
(ստորագրություն)

*Հավելված 3*
*<<_____>>_____20 թ.*
*կնքված N _____ ծածկագրով գնման պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «  » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*<< >>_____ 20 թ. կնքված*
*կնքված N_____ ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

# Ա Ծ Խ Ա Տ Ա Կ Ա Զ Մ Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Մհեր Մկրտչյան 5՝, ք.Երևան 0010, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, Ֆաքս/Հեռ՝ (+37410) 54 39 85, Հեռ.: (+37410) 56 39 61

«24» 03 2009 թ.

№ ԱՄ-664

Հայաստանի կույրերի միավորման «Հրատարակչություն»
սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության գործադիր տնօրեն
պարոն Թ. Բոյաջյանին

Հարգելի պարոն Բոյաջյան

Ձեզ եմ տրամադրում Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2009 թվականի մարտի 23-ի ««Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով (բրայլյան) գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայություններ» ապրանքային շուկայի կառուցվածքի ուսումնասիրության արդյունքների մասին» թիվ 31-Ա որոշումը (պատճենը կցվում է):

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Վ. Եղիազարյան

Վերլուծության վարչություն
(37410) 56 27 87

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*23 մարտի 2009 թվականի*
*թիվ 31-Ա, քաղաք Երևան*

## «ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՏԱՌԱՏԵՍԱԿՆԵՐՈՎ (ԲՐԱՅԼՅԱՆ) ԳՐՔԵՐԻ, ԱՄՍԱԳՐԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ, ՏԵՏՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ «ԽՈՍՈՂ» ԳՐՔԵՐԻ ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2009 թվականի մարտի 23-ի դոնբաց նիստում քննարկեց «Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով (բրայլյան) գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայություններ» ապրանքային շուկայի կառուցվածքի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ հարցը:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովն առաջնորդվեց հետևյալով:

Հայաստանի կույրերի միավորման «Հրատարակչություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ նաև՝ Ընկերություն) 2009 թվականի փետրվարի 10-ի թիվ 01-9 գրությամբ (այսուհետ՝ Գրություն) դիմել է Հանձնաժողով հայտնելով, որ Ընկերությունը 2006-2008 թվականներին մասնակցել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «Պետական գնումների գործակալություն» [illegible] առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Գնումների գործակալություն) կողմից՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար «Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով (բրայլյան) գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթին, որին այլ ընկերություն մասնակցության հայտ չի ներկայացրել և երեք դեպքում էլ հաղթող է ճանաչվել ու կատարել նշված ծառայությունների գծով ստանձնած պարտավորությունները, ուստի և խնդրել է Ընկերությանը բրայլյան համակարգով գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայությունների ոլորտում համարել գերիշխող դիրք ունեցող:

Հանձնաժողովը, հաշվի առնելով նաև Ընկերության Գրությունը, իրականացրել է «Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով (բրայլյան) գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայությունների» ոլորտի ուսումնասիրություններ, որի շրջանակներում տեղեկատվություն է ներկայացվել Ընկերության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության հրատարակչական գործի գործակալության և Գնումների գործակալության կողմից:

Ընկերության 2009 թվականի փետրվարի 23-ի թիվ 01-10 գրությամբ Հանձնաժողով է ներկայացվել 2008 թվականի ընթացքում Ընկերության կողմից տպագրված բրայլյան գրքերի, ամսագրերի, պատրաստված տետրերի և ձայնագրված «Խոսող» գրքերի ծավալների վերաբերյալ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության հրատարակչական գործի գործակալության 2009 թվականի փետրվարի 20-ի թիվ 1/22 գրության՝ գործակալությունը բրայլյան գրականության պարբերական հրատարակության, դպրոցական ու բուհական դասագրքերի տպագրության և «Խոսող» գրքերի ձայնագրության, ինչպես նաև բրայլյան տետրերի

տպագրության որևէ գործառույթ չունի և չի առնչվում համապատասխան տնտեսվարող սուբյեկտների հետ:

Ըստ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2009 թվականի փետրվարի 23-ի թիվ Ե-2009-1682 գրության՝ նախարարությունը 2006 թվականից իրականացնում է «Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրություն, տետրերի պատրաստում և «Խոսող» գրքերի ձայնագրություն» ծրագիրը, որի շրջանակում համագործակցում է Ընկերության հետ:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը 2009 թվականի մարտի 5-ի թիվ 21-06-07/285 գրությամբ հայտնել է, որ ըստ իրենց տվյալների բրայլյան տետրեր, գրքեր և ամսագրեր հրատարակում է Ընկերությունը, իսկ «Խոսող» գրքեր՝ նաև «Մանկության մոլորակ» հասարակական կազմակերպությունը: «Մանկության մոլորակ» հասարակական կազմակերպության պարզաբանմամբ, «Խոսող» գրքերի ձայնագրությունը կատարվել է բարեգործական նպատակով՝ մեկ անգամ և հատկացվել Երևանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների՝ թիվ 14 հատուկ դպրոցին: Հետևաբար, «Մանկության մոլորակ» հասարակական կազմակերպությունը շուկայի մասնակից չի հանդիսանում:

Համաձայն Գնումների գործակալության կողմից ներկայացված տեղեկատվության՝ 2009 թվականի մարտի 2-ի թիվ 09/021-1065 գրության «Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության» ծառայությունների ձեռքբերման մրցույթներին՝ 2006-2008 թվականներին մասնակցության հայտ է ներկայացրել և հաղթող է ճանաչվել Ընկերությունը:

«Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով (բրայլյան) գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը ներառում է բրայլյան գրքերի, ամսագրերի տպագրության, բրայլյան տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայությունները: Շուկայի աշխարհագրական սահմանը Հայաստանի Հանրապետության տարածքն է:

Նշված ապրանքային շուկայում ծառայություն մատուցող միակ տնտեսվարող սուբյեկտը Հայաստանի կույրերի միավորման «Հրատարակչություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն է: Ընկերությունը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատվերով, 2008 թվականի ընթացքում մատուցել է 11 700 000 դրամի ծառայություններ, որից 23,5 տոկոսը՝ բրայլյան գրքերի տպագրություն, 47,8 տոկոսը՝ ամսագրերի տպագրություն, 2,6 տոկոսը՝ բրայլյան տետրերի պատրաստում և 26,2 տոկոսը՝ «Խոսող» գրքերի ձայնագրություն:

Մատուցված ծառայությունների դիմաց, բրայլյան գրքերի ու ամսագրերի համար վճարումը կատարվել է ըստ տպագրված բրայլյան թերթերի քանակի, բրայլյան տետրերինը՝ ըստ պատրաստված տետրերի քանակի, իսկ «Խոսող» գրքերինը՝ ըստ ձայնագրված ժամերի:

Համաձայն Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվության՝ 2008 թվականի ընթացքում Ընկերությունը տպագրել է թվով 480 բրայլյան գիրք՝ 42 337 հատ բրայլյան թերթ, որն արժեքային արտահայտությամբ կազմել է 2 745 100 դրամ, ամենամսյա օրգան «Բյուլետեն» ամսագիրը՝ 960 օրինակ՝ 74 400 բրայլյան թերթ, որն արժեքային արտահայտությամբ կազմել է 5 594 900 դրամ, 1000 հատ բրայլյան տետր, որն ըստ արտահայտության կազմել է 300 000 դրամ, ինչպես նաև ձայնագրել է 100 օրինակ՝ «Խոսող» գիրք՝ 1500 ժամ տևողությամբ, որն արժեքային արտահայտությամբ կազմել է 3 060 000 դրամ:

Համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհ դիրք ունեցող, եթե որպես իրացնող չունի մրցակից: Հետևաբար, Ընկերությունը 2008 թվականի տվյալներով համարվում է «Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով (բրայլյան) գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայություններ» ապրանքային շուկայում մենաշնորհ դիրք ունեցող:

Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում) գրանցվում է Հանձնաժողովի որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով «Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով (բրայլյան) գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայություններ» ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքները և

հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը, 19-րդ հոդվածի «ա» և «գ» կետերը, Հանձնաժողովը

որոշում է

1. «Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով (բրայլյան) գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել բրայլյան գրքերի, ամսագրերի տպագրության, բրայլյան տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայությունները, իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:

2. Հայաստանի կույրերի միավորման «Հրատարակչություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով (բրայլյան) գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայություններ» ապրանքային շուկայում համարել մենաշնորհ դիրք ունեցող (որպես իրացնող չունի մրցակից) և գրանցել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը Հայաստանի կույրերի միավորման «Հրատարակչություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

Ա. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ